

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՍՈՂՈՅԱՆ ԱՍՏԴԻԿ ՎԱԼԵՐԻԱՆԻ

ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ ՊԱՏՈՒՄԻ ԱՐՎԵՍՏԸ

**Ժ. 01.01 - «ՀԱՅ ԴԱՍԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ» ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՄԲ
ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹԵԿՆԱԾՈՒԻ
ԳԻՏԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆԻ ՀԱՅՑՄԱՆ ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ**

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ-2021

Ատենախոսության թեման հաստատվել է Երևանի պետական համալսարանի հայ բանասիրության ֆակուլտետի գիտական խորհրդում:

Գիտական ղեկավար՝

Մակարյան Ալբերտ Արշավիրի
բանասիրական գիտությունների դոկտոր,
պրոֆեսոր

Պաշտոնական ընդդիմախոսներ՝

Գաբրիելյան Վազգեն Արշալույսի
բանասիրական գիտությունների դոկտոր,
պրոֆեսոր

Խառատյան Ալա Արամի
բանասիրական գիտությունների թեկնածու,
դոցենտ

Առաջատար կազմակերպություն՝

ՀՀ ԳԱԱ Մանուկ Աբեղյանի
անվան գրականության
ինստիտուտ

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2021թ. մայիսի 19-ին՝ ժամը 14³⁰-ին, ԵՊՀ-ում գործող՝ ՀՀ ԲՈԿ-ի գրականագիտության 012 մասնագիտական խորհրդի նիստում: Հասցեն՝ ք. Երևան, 0025, Աբովյան 52^ա, ԵՊՀ-ի հայ բանասիրության ֆակուլտետի մասնաշենք, 202 լսարան:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ԵՊՀ-ի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2021 թվականի ապրիլի 7-ին:

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար՝



Ա. ՄԱԿԱՐՅԱՆ
բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Թեմայի արդիականությունը: Խաչատուր Աբովյանն այսօր ամենաճանաչված հայ հեղինակներից է, նրա անհետացման տխուր փաստը (դրա շրջանառվող վարկածներից մի քանիսը) և «Վերք Հայաստանի...» վեպի անունը գիտեն բոլորը՝ անկախ տարիքից ու կրթությունից. Աբովյանի բանահյուսական կերպարը ժողովրդի մեջ թեև ծանոթ է մինչ օրս: Վեպը, սակայն, քչերն են կարդում: Ընթերցողը հեռացել է հայ նոր գրականության հիմնադրի ստեղծագործություններից, դրանք որակում է որպես անհասկանալի, դժվարընթեռնելի ու բարդ գործեր, որոնց դժկամությամբ են մոտենում և՛ աշակերտները, և՛ ուսանողները: Աբովյանի տեքստերի ու ընթերցողի միջև խոյացել է մի պատենշ, որ քչերին է հաջողվում հաղթահարել, և ստացվում է մի պարադոքսալ ու ցավալի փաստ, երբ գրողին արժևորում են, նկատում նրա կատարած դերը, երկերն ուսուցանում դպրոցում, բայց չեն կարդում:

Անառարկելի է, որ հեղինակ-ընթերցող բնականոն շղթան խաթարող ամենամեծ խոչընդոտը լեզուն է՝, սակայն մեծ է նաև բովանդակության և ուսումնասիրման ու մատուցման մեթոդների խնդիրը: Ստեղծագործությունները բարդ են, դրանք ընկալելու և աբովյանական տեքստերի աշխարհը ներթափանցելու համար անհրաժեշտ են գրականագիտական վերլուծություններ ու մեկնություններ: 21-րդ դարի ընթերցողին, սակայն, չեն բավարարում եղած ուսումնասիրությունները, որ, մեծ մասամբ գրված լինելով խորհրդային տարիներին, չեն հետաքրքրում այսօրվա կարդացողին: Ուստի հրատապ է նյութի նորօրյա ուսումնասիրությունը, որ հնարավորություն կտա ժամանակակից գործիքներով և թարմ հայացքով քննել Աբովյանի գեղարվեստական երկերը՝ մատնանշելով դեռևս չնկատված առանձնահատկություններն ու մոտեցնելով տեքստ-ընթերցող հեռացած եզրերը:

Հետազոտության նպատակներն ու խնդիրները: Ատենախոսության նպատակը Աբովյանի գեղարվեստական երկերի կառուցվածքային կողմի քննությունն է՝ շեշտը դնելով պատումի առանձնահատկությունների վրա, թե ինչ միջոցներով և հնարքներով է հեղինակը հյուսում իր պատումը, դիպաշարային ինչ կաղապարներ է կիրառում:

Աբովյանական նարատիվին անդրադարձել ենք երեք ուղղությամբ՝ այն քննելով և՛ չափածոյի, և՛ արձակի համապատկերում, որպես առանձին ձև դիտարկելով նաև միջժանրային կառույցները:

Մեր առջև դրել ենք երեք հիմնական խնդիր՝ պատումի արվեստը դիտելով ինչպես գեղարվեստական (արձակ, չափածո), այնպես էլ գեղարվեստական-մանկավարժական, գեղարվեստական-հրապարակախոսական, գեղար-

¹ Նկատենք, որ լեզվի խնդիրը լուծելու նպատակով փորձ է արվել վեպը փոխադրել արդի արևելահայերենի (տե՛ս **Աբովյան Խ.**, Վերք Հայաստանի: Որք հայրենասերի, արդի հայերենի փոխադրումը՝ Ա. Սարգսյանի, Եր., «Զանգակ-97», 2016):

վեստական-ինքնակենսագրական տեքստերում (ուղեգրություն, մանկավարժական վեպ, դասագիրք, օրագիր):

Աբովյանի ստեղծագործությունը ներկայացրել ենք նաև համեմատությունների համատեքստում՝ դրանք զուգահեռելով նախորդող և հաջորդող գրողների գործերին:

Ատենախոսության գիտական նորույթը: Աբովյանի կյանքի ու գործի մասին առկա է հարուստ գրականություն, լուծված են վերջինիս կենսագրության և ստեղծագործության բազում թնջուկները: Չստվերելով այդ աշխատանքները և չհավակնելով սպառիչ խոսք ասել Աբովյանի ստեղծագործության մասին՝ մեր ատենախոսության էջերում փորձել ենք հայ նոր գրականության հիմնադրի ստեղծագործությունները քննել կառուցյի տեսանկյունից՝ շեշտը դնելով պատումի կառուցման, հեղինակի խնդրի, ներդիր կառույցների, հատվածականության, փաստացի և հնարավոր պատումների հարաբերության, դիտանկյան, ժամանակային ընդգրկվածության և այլ խնդիրների վրա: Ասել է թե՛ մեր ուշադրության կենտրոնում են եղել միանգամայն նոր հարցադրումներ, որոնք գիտական շրջանառության մեջ են դրվում առաջին անգամ:

Աշխատանքում կենտրոնական տեղ ենք հատկացրել Աբովյանի քիչ ուսումնասիրված երկերից մեկին՝ «Աղասու խաղը» պոեմին: Քնարականության կաղապարում մատնանշել ենք պոեմի էպիկական որակը՝ ներկայացնելով պատմողների և պատումների հարաբերությունը: Գործը դիտել ենք նաև իրականության և երևակայության հարաբերակցության համապատկերում՝ ներքին իմաստների բացահայտման նպատակով դիմելով միֆաքննադատության օգնությանը: Միֆաքննադատությունը՝ որպես մեթոդ, կիրառել ենք նաև «Վերք Հայաստանի...» վեպի պարագայում՝ այն մեկնելով հերոսի ճանապարհի մոտոմիֆի կառուցով՝ ըստ հայկական հրաշապատում հեքիաթի գործառույթների:

Աբովյանի «Խաղարկություն մանկանց...» երկն ուսումնասիրել ենք ներքին մենախոսության պատումի համակարգով: Աբովյանի ստեղծագործությունը, ճիշտ է, նախորդում է գրական այդ հնարքի ձևավորմանը, և տրամաբանական է, որ հայ հեղինակը չէր կարող ծանոթ լինել Ջ. Ջոյսի և Ու. Ֆոլքների երկերով համաշխարհային տարածում ստացած մեթոդին: Բայց հայ հանճարն իր գործը հյուսել է մանկան մտքի անկանոն շղթայի տրամաբանությամբ՝ գրելով այնպես, ինչպես կմտածեր երեխան:

Ներկայացրել ենք նաև Աբովյանի տարբեր ստեղծագործություններին վերաբերող գծապատկերներ և աղյուսակներ՝ փորձելով տեսանելիորեն պատկերել երկերի պատումների կառույցները և դրանց առանձնահատկությունները:

Աշխատանքի մեթոդաբանությունը: Ուսումնասիրությունը կատարելիս կիրառել ենք պատմահամեմատական, զուգահրական, կառուցվածքային, հերմենևտիկական և միֆաքննադատական մեթոդները՝ շեշտը դնելով պատումի տեսության վրա: Աբովյանական երկերը վերլուծել ենք՝ հենվելով նարատիվիայի մասին Ժ. Ժենետի, Մ. Բալի, Լ. Դոլեգելի, Գ. Փրինսի, Բ. Ուոլի, Ռ. Բար-

տի, Վ. Շմիդի և այլոց տեսությունների վրա, միֆաքննադատության դիրքերից առաջնորդվել ենք Վ. Պրոպալի, Ն. Ֆրայի, Ջ. Քեմբելի, Մ. Էլիադեի տեսակետներով: Ներքին մենախոսության կառույցի քննության պարագայում օգտվել ենք Հ. Լևինի և Գ. Սթալվի ուսումնասիրություններից, իսկ հոգեբանական քննության դեպքում՝ կիրառել Ժ. Պիաժեի և Փ. Ռոչատի աշխատանքները:

Ատենախոսության կառուցվածքը: Աշխատանքը ներառում է 183 էջ, բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացություններից և օգտագործած գրականության ցանկից:

Ներածության մեջ անդրադարձել ենք Աբովյանի ստեղծագործության նորովի մեկնության անհրաժեշտությանը, ներկայացրել ենք հարցի պատմությունը, մեզանից առաջ ուսումնասիրած գրականագետների աշխատությունների համապատկերում արժևորել խնդիրը, հիմնավորել աշխատանքի արդիակա-նությունը, գիտական նորույթը, թվարկել օգտագործված մեթոդները և մատնա-նշել աշխատանքի տեսական ու գործնական նշանակությունը:

Գ Լ ՈՒ Խ Ա Ռ Ա Ջ Ի Ն

Պ Ա Տ ՈՒ Մ Ը Չ Ա Փ Ա Շ Ո Ե Ր Կ Ե Ր Ի Կ Ա Ռ ՈՒ Յ Ց ՈՒ Ն

1.1 Ե Ր Կ Ե Ռ Ս ՈՒ Թ Յ ՈՒ Ն Ն Ե Ր Ը « Ա Ղ Ա Ս ՈՒ Խ Ա Ղ Ը » Պ Ո Ե Մ ՈՒ Մ

Ատենախոսության առաջին գլխի այս ենթագլխում «Աղասու խաղը» պոեմը դիտել ենք քնարականի ու պատմողականի հարաբերության, դիպաշա-րային գծերի վերհանման և պատմողների հերթագայության ուսումնասիրման հայեցակետերով: Չափաճո երկում քնարական ու պատմողական հոսքերը միաձուլված են և քնարական հերոսի խոսքի տրամադրությունների փոփոխու-թյամբ պայմանավորված՝ անընդմեջ հերթագայում են միմյանց, արտահայտ-վում մեկը մյուսի ներսում, և շատ հաճախ դժվար է բռնել հուզական քնարակա-նության տիրույթում պարփակված գործողությունների ու նկարագրությունների թելը. **գործն ունի մենախոսության համապատկերում արտահայտված յուր-օրինակ երկխոսային բնույթ:**

Հայրենի տանից հեռու՝ տարագրության մեջ գտնվող Աղասին «Քեշիշ օղլու գունով» խաղ է ասում՝ նայելով և դիմելով Մասիսին: Աբովյանն իր պոեմն ամբողջությամբ հյուսում է այդ գրույցի կառույցով, որի 7108 տողն էլ արտա-բերում է գլխավոր հերոսը: Գործը շղարշված է քնարական այս ձևական կաղապարով, երբ Աղասին ողբում է իր ներկա թշվառ վիճակը, հիշում երանելի օրերը, սեփական «ես»-ի պրիզմայի միջով խորհրդաճում հայ ժողովրդի և Հա-յաստանի անցյալի, ներկայի ու գալիքի մասին: Մենախոսային այդ հիմնական պատումի մեջ, սակայն, լսելի են նաև այլ ձայներ, որոնք ոչ թե սոսկ կերպարա-յին խոսքեր են, այլ տեղ-տեղ իրենց վրա են վերցնում պատումն առաջ տանելու գործառույթը:

Իր մենախոսության համապատկերում Աղասին տարբեր երկխոսություններ է կառուցում այլ հերոսների հետ ու պատկերացնում՝ ինչպես նրանք կպատասխանեն իրեն, և այդ պատկերացումների տիրույթում էլ նա իր խոսքը փոխանցում է հայրենի տանը մնացած հարազատներին: Հիմնական գործողություն-եղելությունից հետո նվազ իրադարձային հաջորդ գործողությունները երկխոսություններն են, որ շարժում են բերում ստեղծագործություն: Դրանք կապվում են միմյանց հետ տարբեր հարաբերություններով, որ կարելի է դասակարգել **անցումային, փոխադարձ և աստիճանական** խմբերով:

«Աղասու խաղը», հիրավի, ունի բարդ կառուցվածք. դրա դիպաշարում ներկայացված են տարբեր հարցադրումներ շոշափող և ժամանակային տարբեր պատահիկներ ներկայացնող դեպքեր: Այսպես, ահա՛, ստացվում է Աղասու ողբի մեջ պարփակված փոքրիկ պատմությունների մի համակարգ, որտեղ առկա գծերը հաջորդում ու նախորդում են միմյանց: Պատումի թելն իր ձեռքն առած կերպավորվող յուրաքանչյուր հերոս անդրադառնում է իրեն հուզող խնդիրներին և պատմում յուրովի՝ չկրկնելով մյուսներին: Նա ներկայացնում է իր պատմությունը կամ բերում նույն իրադարձության այլ դիտանկյուն:

1.2 ՓԱՍՏԱՑԻ ԵՎ ՀՆԱՐԱՎՈՐ ՊԱՏՈՒՄՆԵՐԻ ՀԱՐԱԲԵՐԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ «ԱՂԱՍՈՒ ԽԱՂԸ» ՊՈԵՄՈՒՄ

Այս ենթազվիտում պոեմը քննել ենք պատումի աշխարհի երկու բևեռների՝ իրական և երևակայական շերտերի հարաբերակցության պրիզմայով, դիտելով՝ ինչպես է միջին իրացվել ստեղծագործության կառուցում, և ինչ գեղարվեստական հնարքներով է ներկայացվել ընդհանուր պատումին:

Գրականության տեսաբան **Գ. Փրինսի** «Պատումի տեսության բառարանում» «պատումի աշխարհ» հասկացության մեջ տարբերակվում են «փաստացի (կամ բացարձակ) և հնարավոր (կամ հարաբերական) պատումներ, որոնցից առաջինը ներկայացնում է պատումի կերպարների համար իրականության դաշտը, իսկ երկրորդ աշխարհն ստվեղծված է առաջինի կողմից, և/կամ դրա պատմողների երևակայության (հավատալիքների, երազանքների, երազների, գուշակությունների կամ պատկերացումների) աղյուսքն է»²:

Քննվող պոեմում իրականության ու երևակայության սահմանները խարխլված են. Աբովյանն ստեղծել է գեղարվեստական կառույց, որի տիրույթում այդ փաստացի և հնարավոր պատումները հանդես են գալիս յուրօրինակ հարաբերությամբ:

Փաստացի պատումի համապատկերում գլխավոր հերոս Աղասին մեություն մեջ խոսում է Մասիսի հետ՝ այդ մենախոսության ընթացքում պատկե-

² Prince G., A Dictionary of Narratology, Lincoln and London, 2003, p. 64.

րացնելով այն գործողությունները, որ կազմում են երկի դիպաշարը: Հիմնական պատումը կառուցվում է գլխավոր հերոսի խոսքի տիրույթում, այսինքն՝ **հնարավոր պատումի** արժեք է ստանում, որտեղ էլ միահյուսվում են իրականն ու երևակայականը, փաստացին ու առասպելականը: **Արժվանք Արարատի՝ աշխարհի կենտրոնը լինելու հանգամանքն³ օգտագործում է մարդու և Աստծու հանդիպումը գործի տիրույթում որպես իրողություն և ոչ թե երևակայական հնարավորություն իրացնելու համար:** Դիպաշարը զարգանում է այնպես, որ ապագայի մի կամայական կետում Աղասին մահանում է, և վերջինիս **մարմինը՝ երկրի օրինաչափության կրողը, և հոգին՝ երկնքի միավորը**, զատվում են իրարից: Նույն անձի երկու հակոտնյա էությունները կանգնում են դեմ դիմաց, և նրանցից յուրաքանչյուրը ներկայացնում է իր պատմությունը. հոգին մի կողմ է տանում մարդու հետմահու ճանապարհի վրայի առեղծվածային շղարշը (առաջին ճանապարհորդություն, լավ ու վատ արարքների «դավթարի» կշռում, հրեշտակներ ու դևեր, հանդիպում Աստծուն):

Հոգու վերերկրային էությունը հնարավորություն է տալիս հեղինակին որպես փաստ ներկայացնելու նաև հայկական տարբեր առասպելներ: Հոգին նյութական մարմնին է պատմում լեգենդներ ու զրույցներ՝ դրանց տալով, սակայն, ոչ թե երևակայականի, այլ իրականի կարգավիճակ: Իր երկնային ճանապարհորդության ժամանակ, օրինակ, նա հանդիպում է մարդակեր գազանի վերածվող կանանց, որ, գիշերը գայլ դառնալով, ուտում են իրենց և այլոց երեխաներին⁴:

1.3 ԵՐԳԻԾԱԿԱՆ ՊԱՏՈՒՄԻ ՍԿԶՐՈՒՆՔՆԵՐԸ. «ՀԱԶԱՐՓԵՇԵՆ», ԱՌԱԿՆԵՐ

Երրորդ ենթապլիսում անդրադարձել ենք Արժվանի՝ երգիծական չափաձո ստեղծագործություններին՝ երգիծապոեմին ու առակներին: «Հազարփեշեն»-ը հյուսված է հակադրությունների սկզբունքով, որ երևան են գալիս գործի

³ Տե՛ս **Haxthausen A.**, Transcaucasia. Sketches of the Nations and Races between the Black Sea and the Caspian, London, 1854, էջ XII:

⁴ Առասպելի՝ Արժվանի մշակման մասին մանրամասն տե՛ս **Հովսեփյան, Լ.**, Մարդագալի առասպելը Խ. Արժվանի «Աղասու խաղ»-ում, «Էջմիածին», պաշտոնական ամսագիր Ամենայն Հայոց Կաթողիկոսութեան Մայր Աթոռոյ Սրբոյ Էջմիածնի, 2007, թ. ԿԳ (Ժ), էջ 75-81:

Դիտելի է, որ Արժվանի կողմից մշակված հիշյալ առասպելը հնարավոր աղբյուրներ ունի **Ջ. Ք. Ռոսպինգի** «Հարրի Փոթերը և Գաղտնիքների սենյակը» գրքի հետ (Տե՛ս **Ջիվանյան Ա.**, Հարցազրույց, Հարրի Փոթերն ու հայկական ֆենթեզիի հեռանկարները, / <https://www.youtube.com/watch?v=zPkfKYkavxw> , 17:20-20:14, (մուտք՝ 13.03.2019)):

առաջաբանում ու շարունակվում ընթացքում՝ կազմելով դիպաշարի բախման հենքը:

Նախադրությունը նախապատրաստում է գլխավոր հերոսի մուտքը գործողության դաշտ, Աբովյանը նկարագրում է ցարական պաշտոնյայի մտորումները, կերպարի անմիջական խոսքով գծագրվում է վերջինիս աշխարհայացքը, և այդ աշխարհայացքի պրիզմայով էլ տրվում է **ասիացու նկարագիրը՝ կենցաղ սովորույթներ, բարքեր:**

Պաշտոնյայի մտորումներում հանդիպադրվում են **մենք-ի ու դուք-ի ընկալումները**, և նա շրջապատող դուք-ն ու դրան առնչվող իրողությունները քննում է մենք-ի բացարձակ գերակայությամբ: Մարդկային հակադրությունը խտանում է խորհրդանիշ դարձած առարկաների մեջ, և հազարփեշենի կոնկրետացմամբ հանդիպարվում են «հազարփեշա» - «սուպի գոլա», «իծի, ֆորթի լարդած կաշի» - «խտակ բոջկա», «շի բուդիլկա» զույգերը, որ պոեմի առաջին տողերից արդեն խոսքի կոմիզմ են ստեղծում:

Աբովյանական առակները բաժանվում են երկու շրջանի՝ «նախաշավիդյան» և «Պարապ վախտի խաղալիք»-ի⁵: Առաջին շրջանի գործերը գրողը հասցեագրել է երեխա ընթերցողներին, երկրորդինը՝ հասուն մարդկանց, և հեղինակ-ընթերցող այդ հասցեագրումով պայմանավորված էլ տարբերվում են դրանց կենտրոնական գաղափարն ու ուղղվածությունը. մանկական առակների նպատակը դաստիարակիչ դերն է, մյուսներինը՝ ժամանցային գործառույթը⁶:

Աբովյանը պատմողի խոսքն այս ժանրի երկերում հասցնում է նվազագույնի. նկարագրությունները քիչ են, և հնարավորություն դեպքում խոսում են հերոսները: Հեղինակային նկարագրություններն և վերլուծությունները տեղի են տալիս պատումի կառուցման այլ միջոցներին, և առաջնային պլան են գալիս պտտվող դիպաշարերն ու երկխոսությունները: «Երկաթակեր մուկն ու աղքատ հարուստը» և «Հացակեր փեշը» առակների հենքում, օրինակ, Աբովյանը կիրառում է դրության կոմիզմ, իսկ «Ջարմանայի մարդիքը» առակը հյուսված է **«նորովի ընկալման հնարքի» (остранение)**⁷ միջոցով:

⁵ Մանրամասն տե՛ս **Բազյան Ս.**, Խաչատուր Աբովյանը - բանաստեղծ և դրամատուրգ, Եր., 2005, էջ 48-154:

⁶ Նկատենք նաև, որ երկու առակ («Մոլլա Մարադնի պղինձը», «Ջարմանայի մարդիքը») Աբովյանը գետեղել է և՛ դասագրքում, և՛ ժողովածուում՝ ենթարկելով դրանք բառային փոփոխությունների: Այդ երկու գործերում էլ ընդգծված է դաստիարակչական շեշտադրումը:

⁷ Մանրամասն տե՛ս **Տորիշևա Օ.**, Արտասահմանյան գրականագիտության տեսությունը և մեթոդաբանությունը: Ուսումնական ձեռնարկ (թարգմ.՝ **Ա. Զրբաշյանի**), Եր., 2017, էջ 197:

ԳԵՂԱՐՎԵՍԱԿԱՆԻ ԵՎ ՈՉ ԳԵՂԱՐՎԵՍԱԿԱՆԻ ՍԱՀՄԱՆԱԳԾԻՆ

**2.1 ՄԱՆԿԱԳՐԱԿԱՆ ՊԱՏՈՒՄԻ ԵՂԱՆԱԿՆԵՐԸ
«ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ՏԻԳՐԱՆԻ...» ՎԵՊՈՒՄ**

Երկրորդ գլխի առաջին ենթագլխում ուսումնասիրել ենք «Պատմություն Տիգրանի...»-ն «միջգիտակարգային» ստեղծագործությունը, որ կանգնած է մանկավարժական և մանկական գրականությունների հատման կետում: Հեղինակի հիմնական նպատակը միանշանակ դաստիարակության նոր մոտեցումների ուսուցանումն ու սերմանումն է. Աբովյանը խոսում է մեծերի հետ՝ փորձելով վեպի կերպարային համակարգի և բովանդակության միջոցով բացահայտել մանկական դաստիարակության իր տեսլականը: Վեպի՝ իբրև մանկական գրականության ընթերցումը, սակայն, գործին նայում է որպես **հեղինակ-երեխա ընթերցող** երկխոսային հարաբերության կառույցով հյուսված գեղարվեստական ստեղծագործություն:

Պատմողը հիմնականում շարադրում է դեպքերը, ներկայացնում գործողությունները՝ հնարավորության դեպքում չմիջամտելով և իրադարձությունները ներկայացնելով կերպարների երկխոսությունների կառույցով: Այսպիսով՝ Աբովյանը հնարավորինս մոտեցնում է պատումի ժամանակի և պատմության ժամանակի սահմանագիծը:

«Պատմություն Տիգրանի...» վեպն աչքի է ընկնում նաև *ժանր ժանրի մեջ* կառույցով. դիպաշարի ընդհանուր ընթացքին հյուսված են տարբեր ներդիր պատումներ՝ պատմվածք, առակաձև պատմվածք, շարադրություն և այլն:

Ստացվում է՝ ստեղծագործությունն ունի ամենատես պատմող, որի պատումի ընթացքում պատմողի գործառույթ են ստանում նաև կերպարները՝ իրենց ունկնդիրներին կամ ընթերցողներին ներկայացնելով սեփական պատմությունները՝ հյուսված այլ մոտեցումներով և օրինաչափություններով:

**2.2 ՄԱՆԿԱԿԱՆ ՏԵՍԱՆԿՅՈՒՆԸ «ՆԱԽԱՇԱՎԻՂ ԿՐԹՈՒԹՅԱՆ...»
ԴԱՍԱԳՐՔՈՒՄ**

Այս ենթագլխում «Նախաշավիղ կրթության...» դասագիրքը դիտարկել ենք մանկավարժություն-մանկագրություն զուգահեռի համատեքստում, երևան են հանվել դրանց մանկագրական հատկանիշները, հեղինակ-երեխա ընթերցող յուրօրինակ դիմում-հարաբերությունը, դիտարկվել են մանկական պատումի եղանակներն ու միջոցները, երեխա պատմողի առանձնահատկությունները և այլն:

Հեղինակն իր դասագիրքը կառուցում է սխալ-սխալի գիտակցում բանաձևով՝ սխալ գործած երեխա կերպարների մի մասին չտալով փրկվելու հնարավորություն և երկերն ավարտելով մանուկ հերոսների մահով: Աբովյանը կիրառում է վախի կամ ֆիզիկական ցավի դաստիարակիչ ազդեցության գործոնը՝ պատմվածքներին տալով վատ ավարտ:

«Նախաշավիղ...»-ի գեղարվեստական մանրապատումների համապատկերում առանձնանում է դասագիրքը փակող գեղարվեստական ստեղծագործությունը («Խաղարկություն մանկանց, ուր նկարագրի բնություն սրամիտ տղայի ուրումն՝ ձեացելո՛ւ իբրև տկարամիտ ոք եւ գիժ, ի ժամ՝ հարցափորձի»):

Այս փոքրիկ խաղարկություն-պիեսում գործողություններ գրեթե չկան, ֆիզիկական շարժումն ու դպրոցական տարեվերջյան հանդեսի դինամիկ բնույթը հասցված են նվազագույնի, ուստի դիպաշարն առաջ տանողը բանավիճող երեխաների խոսքն է, իսկ գործի մեխը՝ «գժի» մենախոսությունը: Նա արտահայտում է իր մտքերի ցաքուցրիվ շղթան՝ արտածելով ներաշխարհի անկանոն ու տրամաբանորեն չկապակցված մտորումները: Աբովյանն այնպես է կառուցում իր հերոսի խոսքը, որ ծնողներին և մյուս կերպարներին ուղղված բացահայտ արտաքին դիմում-երկխոսության կաղապարում տիրապետող է դառնում հերոսի ներքին մենախոսությունը, և իր առաջին ծավալուն խոսքում «գիժը» ոչ թե համոզում է դասընկերներին, որ ճիշտն իր տեսակետն է, այլ խոսում է ինքն իր հետ՝ բռռերի ուղղահայաց հաջորդականության մեջ արտահայտելով իր մտաշխարհի տարածամանակյա դատումները: Այլ կերպ ասած՝ ձևական արտաքին խոսքի կաղապարով Աբովյանն իր ընթերցողին է հրամցնում երեխա կերպարի ներքին մենախոսությունը:

Այս առանձնահատկությունները թերևս հիմք են տալիս մեզ ուշագրավ առնչություններ տեսնելու քննվող գործի (կամ ավելի ճիշտ՝ դրա մի ծավալուն հատվածի) կառույցի և մտքի հոսքի գրականության տեխնիկաների միջև: Հարկ ենք համարում ընդգծել, որ ուսումնասիրության այս հատվածով քննվող ստեղծագործությունը ոչ թե դասակարգում ենք մտքի հոսքի գրականության սահմաններում կամ համարում դրա արտահայտություն, այլ սոսկ հեռավոր աղերսներ ենք տեսնում այդ գրական հնարքի և այս փոքրածավալ ստեղծագործության միջև: Իր գործի հիմքում որպես արտահայտման ձև դնելով մարդկային մտքի ձևավորման ընթացքը՝ Աբովյանը հասկանալիորեն ոչ թե միտումնավոր գրում է այդ գեղարվեստական հնարքի չափանիշներով, այլ պարզապես իր մանուկ հերոսի խոսքը կառուցում որպես ներքին մենախոսություն:

2.3. ՀՈՒՇԱԳՐԱԿԱՆ ՊԱՏՈՒՄԻ ԵՂԱՆԱԿՆԵՐԸ

Երկրորդ գլխի վերջին ենթագլուխը նվիրված է հուշագրությունը, որ Աբովյանի ստեղծագործության մի կարևոր մասն է կազմում և նոր շերտեր ու գույներ է հաղորդում վերջինիս գեղարվեստական արվեստանոցին: Գրողի այս

ժանրերի գործերից են **օրագրերն ու ուղեգրությունները**. Ինքնակենսագրական արձակին բնորոշ կողմեր կան նաև **գերմաներեն ու ռուսերեն հոդվածներում**:

1830-1835-ին գրված դրոպատյան օրագրերը ժանրի կառուցվածքային առումով բազմաշերտ են ու բազմաբովանդակ: Դրանք և՛ տարբեր իրադրությունների ժամանակային գրառումներ են, և՛ հեղինակի ներքին մտահոգությունների ու զգացողությունների մանրակրկիտ նշումներ, և՛ իրականության զգացական, սուբյեկտիվ գնահատություններ⁸: Օրագրերն սկսվում են ընկերոջն ուղղված **նամակի** ձևով⁹, շարունակվում որպես **իրադարձությունների զգացական կամ նկարագրական շղթա**, տեղ-տեղ ստանում **ուղեգրության** արժեք և ավարտվում որպես **հուշագրություն**: Նարատիվի ընթացքն առաջ է տանում հեղինակային խոսքը. Աբովյանը ներքին դիտանկյունից ներկայացնում է տարածաժամանակային առումով մոտ՝ իր հետ կատարված անցքերը՝ կենտրոնանալով այն իրադարձությունների վրա, որ տեսել կամ լսել է (իրեն պատմել են): Իսկ հեռավորության վրա տեղի ունեցած դեպքերն օրագրերում արտածվում են պատմողի ես-ի զգացական ընկալումների միջոցով: Աբովյանը մի կողմից դեպքերը շարադրում է սուկ **որպես ականատես**¹⁰՝ արձանագրելով փաստերը, մյուս կողմից՝ ներկայացնում այդ **փաստերի ընկալումը ես-ի պրիզմայով**, ինչն էլ ապահովում է հուշագրային տեքստի գեղարվեստական երակը:

Ուղեգրություններից առանձնանում է գեղարվեստականի և հրապարակախոսականի յուրօրինակ հարաբերությամբ հյուսված **«Արևմտյան երեք իմաստուններ»** անավարտ ուղեգրությունը, որ «իր բնույթով մոտենում է գեղարվեստական ակնարկին»¹⁰, ունի «պատմա-ազգագրական ուսումնասիրության»¹¹ արժեք: 1844-ին երկրաբան **Հերման Աբիխի** (1806-1886) հետ Մակու կատարած ճանապարհորդության իրական փաստն այս երկում ստանում է գեղարվեստական ձևավորում, և ուղեգրության հուշագրական հատկանիշների կողքին դրվում են նաև երևակայականները¹²:

⁸ Օրագրի ներժանրային տարատեսակների մասին մանրամասն տե՛ս **Лашкевич А.**, Личный дневник и жанры «дискурса персональности» в контексте межкультурной коммуникации, Ижевск, издательство «Удмуртский университет», 2014, էջ 46:

⁹ **Ե. Շահագիզը** գտնում է, որ Դրոպատյան օրագրերը հասցեագրված են Աբովյանի դասընկեր Առաքել Արարատյանին (տե՛ս Դիվան Խաչատուր Աբովյանի, հ. 2, Եր., 1948, էջ 73):

¹⁰ **Աբովյան Խ.**, Երկերի լիակատար ժողովածու ութ հատորով, հ. 7, Եր., 1956, էջ 460:

¹¹ **Հակոբյան Ա.**, Խաչատուր Աբովյանի կյանքի և ստեղծագործության երևանյան շրջանը (1843-1848), ատենախոսություն, Եր., 2013, էջ 183:

¹² Աբիխի հետ կատարած իրական ճանապարհորդությանը գրողը տալիս է արկածային երանգավորում՝ այն հյուսելով անգլիացի գրող **Ջ. Մորիերի** (1782-1849) «Սպահանցի Հաջի Բարայի արկածները» վեպի մոտիվներով (տե՛ս Morier J., Hajji Baba of Ispahan, // URL: <https://www.litmir.me/br/?b=20098&p=11> (մուտք՝ 18.10.2020):

ԳԵՂԱՐՎԵՏԱՍԿԱՆ ԱՐՁԱԿԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ԱՐՎԵՍՏԸ

3.1 ՊԱՏՄՈՂԻ ԿԵՐՊԱՐԸ «ՎԵՐՔ ՀԱՅԱՍՏԱՆԻ...» ՎԵՊՈՒՄ

«Վերք Հայաստանի...» վեպում գործողություններն առաջ տանող ծայնը մեծ մասամբ պատմողինն է. կերպարների երկխոսություններն այդ դիտանկյունից երկրորդական դեր են ստանձնում: Նրանց մտքերն ու դատումները հիմնականում տրվում են հեղինակի խոսքի կառուցում, և այս առումով ունենում ենք **պատմողի** ու **կերպարի** դատումների, գաղափարների և դիտանկյան միաձուլում, երբ առաջինի մտքերը զուտ ձևական առումով հնչում են երկրորդի շուրթերից: Պատմողի մտքերի ձևական խոսափողն են դառնում, օրինակ, Աղասին, տանուտեր Օհանեսը, Հարությունը և այլք:

Վեպում հեղինակը պարբերաբար դիմում է իր **ընթերցողին**¹³՝ մի դեպքում՝ կոնկրետացնելով վերջինիս ով լինելը, մյուս դեպքում՝ ընդհանրացնելով: Այդ դիմումները նախ և առաջ ունեն ուշադրություն գրավելու և այն լարված պահելու միտում, երբ պատումը վարողը կապ է ստեղծում կարդացողի հետ ու պահպանելով այդ կապն ամբողջ ստեղծագործության ընթացքում՝ ազդում է վերջինիս ընկալման վրա¹⁴:

Հեղինակ-ընթերցող երկխոսության **ես-դու ընդունված կաղապարը** վեպի կառուցում ստանում է նաև միասնական արտահայտություն (**մենք**): Պատմողը, միահյուսելով հասցեագրողի ու հասցեատիրոջ կողմերը, նույնացնում է դրանք՝ կիրառելով ընդհանրական դիմելաձև. «Սաքի մենք է՝նպես չենք անում, կոպիտ գեղըցու վրա ի՞նչ ենք զարմանում կամ ծիծաղում»¹⁴, «...հավատացի՛ր ինձ, մեղավորը նրանք չեն, մենք ենք» (էջ 122) և այլն:

Վեպի պատումի մակարդակում ընթերցողը, հասցեագրվող եզր լինելուց բացի, ստանում է նաև կերպարային ներգրավվածություն. Աբովյանը նրա Ես-ը տեղավորում է երկի կերպարային չափումում՝ դարձնելով **գործող անձ**, ականատես: Այս նպատակով փոփոխության են ենթարկվում դիտանկյան տարածական ու ժամանակային պլանները, և **ընթերցողը բերվում է պատումից ներս՝ գործողությունների դաշտ**: Գեղարվեստական այս հնարքը գործադրվում է վեպի երկու բնույթի հատվածներում՝ երգիծական ու ողբերգական պատումների կառուցներում (առաջինում, ի դեպ, այն առավել լայն կիրառություն է ստանում):

¹³ Տե՛ս **Женетт Ж.**, Фигуры, в 2-х томах, том 1-2, М., 1998, էջ 425:

¹⁴ **Աբովյան Խ.**, Վերք Հայաստանի, Եր., 1981, էջ 54: Այսուհետ նույն աղբյուրից բերվող մեջբերումները կնշվեն տեղում:

Ակզբում ընթերցողին վերագրվող գործողություններին փոքր դեր է հատկացվում, որ հնարավոր է «կատարել»՝ պահպանելով դիպաշարի դեպքերից որոշակի հեռավորություն. «Նրանց կնանցը, որ մտիկ տալիր, խելքը կերթար...» (էջ 68): Քայլ առ քայլ, սակայն, հեղինակը մեծացնում է վերջինիս դերը՝ նրան տեղափոխելով նկարագրվող իրադարձություններին շատ մոտ՝ «գրքի էջերից ներս»: **Այսպիսով՝ փոփոխվում է և՛ պատմողի, և՛ ընթերցողի դիտանկյան տարածական պլանը, և նրանք իրադարձություններին ծանոթանում են անմիջական հեռավորությունից թաքցնված.** «Արի՛, հմիկ գոմի դռանը կանգնի՛նք ու մեր քեղխուղեքանց քեֆին թամաշ անենք <...>. գնա՛նք, ի՞նչ կա որ, հո մեզ չե՞ն ուտիլ» (էջ 77):

3.2 ՀԵՐՈՍԻ ՃԱՆԱՊԱՐՀԻ ՄՈՆՈՄԻՖԻ ՄՈԴԵԼԸ ՎԵՊԻ ԿԱՌՈՒՅՑՈՒՄ

Հարազատ տուն – հեռավոր աշխարհ ցիկլային ճանապարհորդության մոտիվը ընկած է տարբեր ազգերի բանավոր և գրավոր մշակույթների հենքում: Հերոսը տարբեր շարժառիթներով դուրս է գալիս իր բնական միջավայրից, ճանապարհ ընկնում դեպի անձանոթ ու չուտամնասիրված տարածքներ և ձեռք բերելով որոշակի հմտություններ՝ վերադառնում: Իր քայլերով նա գծում է գործողությունների ու գործառույթների մի պտտվող շրջան, որ, դառնալով ստեղծագործության համակարգի գործող շարժիչը, իր շուրջն է հյուսում ամբողջ պատումը¹⁵:

Ամերիկացի գրականագետ **Ջ. Քեմբելը** հերոսի ճանապարհի այդ մոտիվը¹⁶ դիտում է որպես համաշխարհային առասպելաբանության համապատկերում **կրկնվող մոնոմիֆ, որ ընդհանուր է բոլոր մշակույթների համար:** Խնդիրն նայելով կառուցվածքաբանության տեսանկյունից՝ հեղինակը **արքետիպ-հերոսի** ճանապարհորդության համար առանձնացնում է 12 կետ, որոնք ստեղծագործության գործողության պլանում ստանում են փուլերի արժեք¹⁷: Գիտնականի աշխատությունը խարսխված է ազգերի բանավոր մշակույթի վրա, բայց այն կիրարկելի է նաև գրականության ծիրում և համակողմանիորեն դրսևորվում է հատկապես բանահյուսական հենք ունեցող գրական երկերի դեպքում:

¹⁵ Գեղարվեստական այս մոտիվի արմատները գալիս են նվիրագործման հնագույն ծեսից (մանրամասն տե՛ս **Элиаде М.**, Тайные общества. Обряды инициации и посвящения, М., 1999, էջ 13):

¹⁶ **Ն. Ֆրայը** դրան տալիս է հրաշալի թափառումի մոտիվ անվանումը: տե՛ս **Фрай Н.**, Анатомия критики, очерк первый, “Зарубежная эстетика и теория литературы XIX—XX вв. Трактаты, статьи, эссе”, М., 1987, էջ 254:

¹⁷ Մանրամասն տե՛ս **Кэмпбелл Дж.**, Тысячеликий герой, М., 1997:

Լինելով նոր գրականության հիմնաքարն ու ուղի բացելով դրա զարգացման համար՝ Աբովյանի վեպը նաև հայկական բանահյուսության օրգանական շարունակությունն է: Քաջածանոթ լինելով հայկական բանավեպտին՝ Աբովյանը «Վերք Հայաստանին...» ոչ միայն հարստացնում է բանահյուսական ոճերով ու արտահայտություններով, այլև դրա հենքում դնում ժողովրդական վեպին բնորոշ կաղապար ու հերոսների գործառույթները կառուցում հեքիաթի նշանային համակարգի վրա, որն էլ հիմք է տալիս մեզ քննելու գործը՝ ըստ հերոսի ճանապարհի մոնոմիֆի փուլերի. 1. **կանչ դեպի թափառումներ**, 2. **կանչի մերժում**, 3. **կինը՝ որպես գայթակղություն**, 4. **գերբնական օգնություն**, 5. **այլ աշխարհի շեմի հաղթահարում**, 6. **փորձությունների ճանապարհ**, 7. **հրաժարում վերադարձից**, 8. **վերջին փորձություն**, 9. **հաշտեցում հոր հետ**, 10. **կետի որովայնում**, 11. **վերադարձ մեկնակետին**:

3.3 ԻՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԸՆԿԱԼՈՒՄՆ ՈՒ ԱՐՏԱԾՈՒՄԸ ՊԱՏՄՎԱԾՔՆԵՐՈՒՄ

Վերջին ենթազվխում պատմվածքները քննել ենք իրականության ընկալման և արտածման հայեցակետով. ինչպե՞ս է պատումը վարողը դիտում շրջակա աշխարհը և ի՞նչ միջոցներով է կերպավորում այն տեքստում, ո՞րն է երևույթների սուբյեկտիվ-քնարական և օբյեկտիվ-պատմողական ներկայացման սահմանը, և ինչպե՞ս են այդ երկու երակները զուգադրվում արվյանական արձակում:

«Առաջին սերը» գործը շարադրված է երրորդ դեմքով, պատմողը ամենատես ինքնությունն է, որ ներկայացնում է դեպքերը հեռու ու մոտ տարածություններից՝ կարդացողին ծանոթացնելով ինչպես կատարվող գործողություններին, այնպես էլ հերոսների ներաշխարհին՝ **մտքեր, հույզեր, երազներ, դատումներ, ցանկություններ, տեսիլքներ**: Գործում երկխոսությունները հասցված են նվազագույնի, և թե՛ արտաքին իրադարձությունները, թե՛ կերպարների ներքին մտորումները տրվում են վերջինիս վերլուծությունների միջոցով:

Իր կառուցով, պատումի ձևով և բովանդակությամբ «Առաջին սերը» մոտ է կանգնում «Վերք Հայաստանի» վեպին, և թվում է, թե դրանցում լսելի է նույն պատմողի ձայնը: Խնդիրն այլ արտահայտություն է ստանում մյուս պատմվածքներում, որոնցում, ճիշտ է, դիպաշարային կողմը թույլ է արտահայտված, բայց փոփոխված է իրականության ընկալման և արտածման խնդիրը: «Թուրքի աղչիկը», «Աշխարհիկ բարբառ երևանցի հայոց», «Բարեկամի մոտ», «Թիֆլիզու հայոց հանգստարանը», «Հունայնություն աշխարհի. այգին Ղորղանովի» երկերում պատմողը խոսում է առաջին դեմքով՝ կիրառելով արտաքին (որոշ դեպքերում՝ ներքին) դիտանկյուն:

«Հունայնություն աշխարհի. այգին Ղորղանովի» գրեթե չուսումնասիրված պամվածքում **անցյալի հիշողությունն ու պատմող հերոսի** երևակայությունն են դառնում դեպքերը ներկայացնելու յուրօրինակ միջոց: Պատմողը դրանց ականատեսը չէ. նա սեփական ընկալողական պրիզմայից արտաճում է այն, ինչ լսել է ուրիշներից՝ պարուրելով դրանք զգացական ու քնարական շղարշով: Ս. Բազյանի խոսքերով՝ «...զգայությունների հեղեղը տրորում է պատկերի բնական սահմանները»¹⁸: Ինչպես «Աղասու խաղը» պոեմը, արձակ այս երկը ևս կանգնած է իրականության ու երևակայության, երկրային ու երկնային ոլորտների միջև, և պատմողական հատուկենտ տարրերն ի հայտ են գալիս քնարականության տիրական կառույցում:

Ե Ձ Ր Ա Կ Ա Ց ՈՒ Թ Յ ՈՒ Ն Ն Ե Ր

Ուսումնասիրելով Խաչատուր Աբովյանի պատումի արվեստը՝ հանգել ենք հետևյալ եզրակացություններին.

1. Խաչատուր Աբովյանի ստեղծագործությունն աչքի է ընկնում ձևաբովանդակային կուռ ամբողջությամբ ու թեմատիկ բազմաշերտությամբ: Այն մի կողմից արձագանքում է արդիական խնդիրներին, մյուս կողմից՝ արձարձում հավերժական հարցադրումներ և ունի կառուցվածքային յուրօրինակ համակարգ: Հայ նոր գրականության հիմնադիրը պատումը հյուսում է համադրական ու հակադրական հատումներով՝ գրեթե միշտ հանդիպադրելով երկու և ավելի տարաբնույթ հոսանքներ (քնարականություն-էպիկականություն, իրականություն-երևակայություն, պատմություն-առասպել, երկինք-երկիր, կյանք-մահ և այլն), որ զուգահեռվում կամ հակադրվում են ընդհանուր պատումի կառույցում:

2. «Աղասու խաղը» անավարտ պոեմը քնարապատմողական է՝ հյուսված կյանքի զգացական ընկալման և դիպաշարային տարրերի զուգորդմամբ: Էպիկական կողմը, ընդ որում, քողարկված է քնարական հերոսի հուզական ապրումների գերակա շղարշով: Երկի պատումը բազմաձայն է. Աբովյանը, իրական գործողությունների դաշտում կերպավորելով մեկ հերոսի, վերջինիս երևակայության համապատկերում ստեղծում է տարբեր կերպարներ՝ տալով նրանց սեփական պատումները վարելու գործառույթ: Գլխավոր պատմության կառույցում համակցվում են տարաբնույթ ներդիր պատմություններ, որ միմյանց նկատմամբ ստանում են աստիճանական դասավորվածություն:

3. «Աղասու խաղը» պոեմում իրականությունն ու երևակայությունը միաձուլվում են: Երկի պատումի աշխարհը հյուսված է փաստացի և հնարավոր պատումների յուրօրինակ զուգորդմամբ, երբ Մասիսի միջակական գործառույթի ազդեցությամբ հատվել են երկրային ու երկնային ոլորտները, և դրախտի ու սովորական աշխարհի չափումները գործի մտացածին իրականության համապատ-

¹⁸ **Բազյան Ս.**, Աբովյանի գրական ժառանգությունը, Եր., 1966, էջ 127:

կերում իրացվում են հավասարաչափ: Ըստ այդմ՝ Աբովյանը երկատում է հիմնական պատմող Աղասուն՝ կերպարը տրոհելով երկու ներհակ էությունների՝ մարմնի և հոգու, որոնցից յուրաքանչյուրը, ձեռքն առնելով պատումի թելը, դեպքերը շարադրում է իր դիտանկյան գաղափարական պրիզմայով:

4. Պատումային բնույթ ունեցող չափածո երկերում երգիծանքն արտահայտվում է խոսքի ու իրադրության կոմիզմների միջոցով: «Հազարփեշեն» երգիծապոեմի հիմքում Աբովյանը դնում է հակադրական համակարգ՝ դրա կառուցվածքային բոլոր տարրերը հանդիպադրելով *մենք*-ի ու *դուք*-ի գաղափարական հատումներում, որ արտահայտվում են անձերի, գործողությունների, մշակույթների, դասակարգերի և բառապաշարի միջոցով: Առակների դեպքում կառույցի առումով հենակետային են դառնում երկխոսություններն ու շրջուն դիպաշարերը. հեղինակային պատումը հասցվում է նվազագույնի, և կարևոր նշանակություն է ստանում կերպարային խոսքը:

5. «Պատմություն Տիգրանի...» վեպը միջժանրային ստեղծագործություն է, որը գտնվում է մանկավարժության ու մանկագրության սահմանագծին: Որպես մանկավարժական վեպ՝ այն հասցեագրվում է մեծահասակներին, ներկայացնում կրթության ու դաստիարակության նոր մոտեցումներ, իսկ երկրորդ տիպի ընթերցման պարագայում՝ երեխաներին: Պատումի արվեստի ուսումնասիրման տեսանկյունից վեպն ակնառու է նաև *ժանր ժանրի մեջ* կառույցով. Աբովյանն ընդհանուր դիպաշարին է հյուսում երկրորդական պատումներ, որ մի կողմից ունեն դաստիարակչական ընդգծված նշանակություն, մյուս կողմից բազմաշերտ ու տարաբովանդակ են դարձնում գործը:

6. «Նախաշավիղ կրթության...» դասագիրքը, մանկավարժական յուրօրինակ ձեռնարկ լինելուց բացի, ընթերցողի առջև դրվում է նաև որպես մանկական ստեղծագործությունների ընթերցարան, որտեղ ներառված են տարբեր ժանրերի արձակ ու չափածո ինքնուրույն և թարգմանական երկեր: Դաստիարակչական ընդգծված բովանդակություն ունեցող այդ գործերը գրքի ամբողջության կառույցում կատարում են նշանային կարևոր գործառույթ. կրկնվող վատ ավարտները, դաժան տեսարաններն ու մահվան նկարագրություններն ազդում են ընթերցող երեխաների հոգեբանության վրա՝ ձևավորելով համապատասխան արժեհամակարգ:

7. Դասագրքում ընդգրկված «Խաղարկություն մանկանց...» ստեղծագործության առաջին ծավալուն հատվածը հյուսված է պատումի յուրօրինակ արվեստով: Պատմող երեխայի ոչ ծավալուն խոսքի կառույցում խաչվում են ժամանակային և գիտակցական տարաբնույթ հատույթներ՝ մանկական անհոգ անցյալն ու դպրոցական դժվարին օրերը: Հասկացական այդ երկու պրիզմաներով էլ ներկայացվում են դեպքերը՝ արտահայտվելով մարդու մտքի ընթացքին բնորոշ ժամանակային ոչ գծային շղթայով: Հերոսն աշխարհին ընկալում է իր չորս զգայարանների միջոցով՝ պատումը կառուցելով էգոկենտրոնացման հենքի վրա:

8. Աբովյանի հուշագրային գրականության էջերում մեկտեղվում են անձնական հիշողություններն ու ապրումները և դրանց գեղարվեստական իրացումները. կյանքի անձնական դիպաշարերը տեղ-տեղ արտահայտվում են արվեստի տարբեր հնարքների միջոցով (կերպար, դիպաշար, պատում): Դորպատյան օրագրերում գրողը համակցում է նամակի, անձնական հիշատակարանի, ուղեգրության և հուշագրության օրինաչափությունները՝ մի դեպքում դիմելով կոնկրետ ընթերցողի, մյուս դեպքում շարադրելով խիստ անձնական տեքստ: Ի տարբերություն օրագրերի՝ ուղեգրությունները գրված են ընթերցվելու միտումով: Դրանց բովանդակային առանցքում ղնելով որևէ իրական ճանապարհորդություն՝ արտահայտման պլանում Աբովյանն ավելացնում է երևակայական ու մտացածին հատկանիշներ. յուրաքանչյուր ուղեգրության կառուցում գործում են իրականության ու երևակայության տարբեր հարաբերություններ:

9. «Վերք Հայաստանի. Ողբ հայրենասիրի» վեպի պատումի կառուցում առանցքային նշանակություն ունի պատմողի կերպարը, որ ստեղծագործության համակարգում ոչ գործող անձ, բայց արտահայտված անհատականություն է և ունի ժողովրդական պատմողի հատկանիշներ: Վեպի պատումը հատվածական է՝ հյուսված այն վարողի ճայների ու դիմակների բազմազանությամբ: Դիպաշարի ընդհանուր շղթայի տարաբնույթ դրվագներից (գեղարվեստական, պատմական, միֆական, քնարական և փիլիսոփայական) յուրաքանչյուրում կերպավորվում է պատմողի առանձին ինքնություն, որ շարադրում է դեպքերը տեքստի կոնկրետ հատվածին բնորոշ առանձնահատկություններին համապատասխան:

10. Վեպում գործառական կարևոր նշանակություն է տրվում նաև ընթերցողի կերպարին, որը պատումի մակարդակում արտահայտվում է որպես հասցեագրող-հասցեատեր դիմումային հարաբերության երկրորդ կողմ՝ ստանալով և՛ կոնկրետ, և՛ հավաքական դրսևորումներ: Պատմող-ընթերցող երկխոսության *ես-դու* ընդունված կաղապարը գործի որոշ կետերում կերպափոխվում է, և հակառակ բեռներում կանգնած կերպարային ինքնությունները պատմողի խոսքում ձուլվում են *մենք*-ի ընդհանրական կառուցում:

11. «Վերք Հայաստանի...» վեպի նշանային քննությունը հնարավորություն է տալիս այն դիտելու հերոսի ճանապարհի մոնումիֆի կառուցով: Այդ դիտանկյունից վեպի տարածական հարթությունը և հերոսի գործառույթներն ստանում են գործառական առանցքային նշանակություն: «Քանաքեռ – արկածների ճանապարհ - Քանաքեռ» պատվող շղթան պայմանավորում է Աղասու ճանապարհորդությունը՝ հեռացում ու վերադարձ տուն՝ մահվան միջով: Բանահյուսական հերոսների համաբանությամբ Աղասին նույնպես անցնում է ճանապարհային կարևոր փուլեր: Դեմ գնալով հոր խոսքին՝ նա լքում է հարազատ միջավայրը, անցնում փորձությունների ուղով (Ապարան, Խլղարաքիլիսա), անձանոթ աշխարհում (Անի) ձեռք բերում թշնամու հետ վերջնական մենամարտի համար անհրաժեշտ գիտելիքներն ու ունակությունները, սպանում ջրի ճանապարհը

(Զանգու) փակող դեկն (Երևանի բերդ) ու ազատում հայրենիքը օտարի լծից (Պարսկաստան):

12. Արվյանի պատմվածքները կառուցվածքային արողջությամբ և բովանդակային ընդգրկվածությամբ միանշանակորեն զիջում են վեպին: Դրանց պատումն աչքի է ընկնում անհարթություններով ու անմշակ հատվածներով: Հեղինակի բարձրացրած հարցադրումները չեն ստանում համապատասխան ձևային արտահայտություն: Իրականության ընկալման և արտածման խնդիրն իրացվում է հեղինակի զգացական պրիզմայի միջոցով, պատմողի սուբյեկտիվ ես-ը գերակա է, գործող անձինք համակողմանիորեն չեն կերպավորվում: Այդ երկերը, սակայն, առանցքային տեղ են զբաղեցնում մի կողմից՝ Արվյանի ստեղծագործական արվեստանոցի, մյուս կողմից՝ հայկական պատմվածքի պատմության համապատկերում:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԴՐՈՒՅԹՆԵՐԸ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԵՆ ՀԵՂԻՆԱԿԻ ՀԵՏԵՎՅԱԼ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐՈՒՄ.

1. **Սողոյան Ա.**, «Խաչատուր Արվյանի «Հազարփեշեն» երգիծապոեմը» // «ԵՊՀ ՈՒԳԸ գիտական հոդվածների ժողովածու», հանդես, թիվ 1.2 (19), Երևան, 2017, էջ 31-39:

2. **Սողոյան Ա.**, «Խաչատուր Արվյանի «Աղասու խաղը» քնարապատմողական պոեմի երկխոսային բնույթը» // «ՎԷՄ», համահայկական հանդես, ապրիլ-հունիս, թիվ 2 (66), Երևան, 2019, էջ 67-85:

3. **Սողոյան Ա.**, «Խաչատուր Արվյանի «Աղասու խաղը» պոեմի պատումի աշխարհը» // «Հայագիտության հարցեր», հանդես, թիվ 2 (17), Երևան, 2019, էջ 117-133:

4. **Սողոյան Ա.**, «Խաչատուր Արվյանը մանկագիր. պատումի առանձնահատկությունները «Պատմություն Տիգրանի...» վեպում» // «Բանբեր Երևանի համալսարանի. Բանասիրություն», հանդես, թիվ 3 (30), Երևան, 2019, էջ 14-25:

5. **Սողոյան Ա.**, «Խաչատուր Արվյանի «Նախաշալիղ կրթութեան» դասագիրքը՝ որպես մանկական ստեղծագործությունների ընթերցարան» // «Հայագիտության հարցեր», հանդես, թիվ 1 (19), Երևան, 2020, էջ 129-142:

6. **Սողոյան Ա.**, «Հերոսի ճանապարհի մոնոմիֆի մոդելը Խաչատուր Արվյանի «Վերք Հայաստանի» վեպում» // «Պատմաբանասիրական հանդես», թիվ 2 (214), Երևան, 2020, էջ 220-233:

АСТГИК ВАЛЕРИАНОВНА СОГОЯН

ИСКУССТВО НАРРАЦИИ ХАЧАТУРА АБОВЯНА

Диссертация на соискание ученой степени кандидата филологических наук по специальности 10.01.01 – «Армянская классическая литература».

Защита диссертации состоится 19 мая 2021 г., в 14:30 на заседании специализированного совета по специальности Литературоведение - 012 ВАК по присуждению ученых степеней при Ереванском государственном университете.

Адрес: 0025, г. Ереван, ул. Х. Абовяна 52а (восьмой корпус ЕГУ, факультет армянской филологии, аудитория 202).

РЕЗЮМЕ

Актуальность темы

Хачатур Абовян - один из самых известных армянских авторов. Печальный факт его исчезновения (некоторые из распространенных версий) и название романа «Раны Армении...» знают все, независимо от возраста и образования. Однако роман читают немногие. Читатель отошел от произведений основоположника новой армянской литературы, квалифицирует их как непонятные и трудные для чтения. Между текстами Абовяна и читателем существует барьер, который немногим удастся преодолеть. Получается парадоксальный и болезненный факт - писателя ценят, замечают его роль, произведения преподают в школе, но не читают.

Бесспорно самое большое препятствие на пути дискурса автор-читатель это язык, но актуальна и проблема методов изучения и представления. У произведений Абовяна сложная структура, для их понимания и проникновения в мир абовянских текстов, нужны новые методы анализов и интерпритаций. Читателя XXI века не удовлетворяют существующие исследования, которые, в основном написанные в советские годы, не интересуют сегодняшнего читателя. Следовательно, актуально современное изучение материала, что даст возможность с помощью современных инструментов по новому взглянуть на произведения.

Цели и задачи исследования.

Целью диссертации является структурное исследование произведений Абовяна, с акцентом на особенности нарратива. Мы исследовали повествование Абовяна в трех направлениях – поэзия, проза и межжанровые структуры, как отдельный тип (путевые записи, педагогический роман, учебник, дневник).

Также, работы Абовяна представлены в контексте сравнений, проведены параллели с произведениями предыдущих и последующих писателей.

Научная новизна диссертации

О жизни и творчестве Абовяна написана богатая литература, решены многие спорные вопросы его биографии и творчества. Не затмевая эти произведения и не претендуя сказать исчерпывающее слово, на страницах диссертации мы попытались рассмотреть произведения основоположника новой армянской литературы с точки зрения структуры, подчеркнув построение наррации, проблему автора, взаимосвязь актуальных и возможных нарративов, и т. д. То есть в центре нашего внимания оказались совершенно новые вопросы, которые впервые вводятся в научный оборот.

Методология работы

В исследовании мы использовали историко-сравнительные, сравнительные, структурные, герменевтические, мифологические методы, фокусируя на теорию нарратива. Мы проанализировали произведения Абовяна на основе нарратологии (Ж. Женетт, М. Балл, Л. Дозел, Г. Принс, Б. Уолл, Р. Барт, В. Шмид), с точки зрения мифокритики (В. Пропп, Н. Фрай, Дж. Кэмпбелл и М. Элиаде). В случае исследования структуры внутреннего монолога мы пользовались исследованиями Х. Левина и Г. Страва, а при психологическом анализе – работами Ж. Пиаже и П. Рочата.

Структура диссертации

Работа состоит из введения, трех глав, заключения, списка литературы.

Во введении отдавая должное предшествующим исследователям, изучавшим данный материал, мы коротко изложили историю вопроса, выделили научную новизну, обосновали цели, задачи и актуальность исследования.

Первая глава («Нарратив в структуре поэзии»), включающая три подглавы, посвящена повествовательным стихам Абовяна («Игра Агаси», «Хазарпешен», басни).

Во второй главе («На границе художественного и не художественного»), включающей три подглавы, мы исследовали межжанровые произведения Абовяна, пограничные между художественной и научной литературой (публицистика, педагогика), в которых две стороны действуют в сочетании.

В третьей главе («Искусство построения художественной прозы»), состоящей из трех подглав, представлена художественная проза Абовяна – роман «Раны Армении: Скорбь патриота» и рассказы. Роман исследован с точки зрения структуры и мифокритики, в его символической системе, по структуре «мономифа пути героя» (выдвинутым Дж. Кэмпбеллом), отмечаются функции армянской волшебной сказки.

В заключении обобщены основные результаты научного исследования.

Объем диссертации составляет 183 страниц.

ASTGHİK SOGHÖYAN

KHACHATUR ABOVYAN'S ART OF NARRATION

Dissertation for acquiring Philological science degree. Field of specialization: 10.01.01 —Armenian classical literature.

The defense of the dissertation will take place on May 19, 2021 at 14:30 at the HQC of RA's Specialized Council 012 of "Literature Studies" in Yerevan State University.

Address: 0025, Yerevan, Abovyan st. 52/A, YSU, 8th building, Faculty of Armenian Philology, room 202.

SUMMARY

The modernity of the theme: Khachatur Abovyan is one of the most famous Armenian authors. The sad fact of his disappearance (some of the widespread versions) and the title of the novel "Wounds of Armenia ..." are known to everyone, regardless of age and education. The novel, however, is read by few. The reader is moved away from the works of the founder of the New Armenian literature, qualifying them as incomprehensible and difficult to read. There is a barrier between Abovyan's texts and the reader, which only few manage to overcome. It turns out to be a paradoxical and painful fact - the writer is appreciated, his role is noticed, his works are taught at school, but they are not read.

Undoubtedly, the biggest obstacle to author-reader discourse is language, but the problem of study and presentation methods is also relevant. Abovyan's works have a complex structure, so for understanding and penetration into the world of Abovyan's texts, new methods of analysis and interpretation are needed. The 21st century reader is not satisfied with the existing research that was mainly written in the Soviet years and is not interesting for today's reader. Consequently, the modern study of the material is relevant, which will enable to look at the works in a new way, with the help of latest tools.

The aims and problems of the research: The aim of the dissertation is the structural study of the works by Abovyan, with an emphasis on the features of the narration. Abovyan's narration is studied in three directions - poetry, prose and inter-genre structures, as a separate type (travel notes, pedagogical novel, textbook, diary). Abovyan's works are also presented in the context of comparisons, and parallels are drawn with the works of previous and subsequent writers.

The scientific novelty of the dissertation: A rich literature has been written about the life and work of Abovyan, many controversial issues of his biography and work have been resolved. Without overshadowing these works and

pretending to have said the comprehensive word, on the pages of the dissertation the works of the founder of the New Armenian literature are considered from the point of view of structure, emphasizing the construction of the narration, the author's problem, the relationship of actual and possible narratives, etc. That is, the focus of my attention is turned on completely new issues that are being introduced into scientific circulation for the first time.

The methodology of the work: In the study the focusing on the theory of narrative is carried out by the usage of Historical-comparative, Comparative, Structural, Hermeneutic, Mythological methods. The works of Abovyan are analyzed on the basis of Narratology (G. Genette, M. Bal, L. Doležel, G. Prince, B. Wall, R. Barth, W. Schmid), from the point of view of Mytho-criticism (V. Propp, N. Frye, J. Campbell and M. Eliade). In the case of studying the structure of the Internal Monologue, the research of H. Levin and G. Struve are used, while for the psychological analysis - the works of J. Piaget and Ph. Rochat.

The structure of the dissertation: The work consists of introduction, three chapters with their corresponding subchapters, conclusion and bibliography.

In **Introduction** by evaluating nearly all the previous studies I've composed in brief the history of the issue and underlined the scientific novelty of the dissertation. By explaining the aims and problems of the research I've justified the modernity of the dissertation.

The first chapter ("The Narrative in the structure of poetry"), which is divided into three subchapters, is devoted to the narrative poems of Abovyan ("The Play of Agasi", "Hazarpeshen", fables).

In the second chapter ("On the border of Fiction and non-Fiction"), which is divided into three subchapters, Abovyan's intergenre works are explored, bordering between fiction and scientific literature (publicism, pedagogy), where the two sides act in combination.

In the third chapter ("The Art of Constructing Fiction Prose") consisting of three subchapters, Abovyan's fictional novel "The Wounds of Armenia: The Sorrow of a Patriot" and stories are presented. The novel is studied from the point of view of structure and myth criticism. The functions of the Armenian fairy tale are noted in its symbolic system, according to the structure of the "Monomyth of the Hero's journey" (put forward by J. Campbell).

In the section of **Conclusion** I've summarized all main and essential results that have been generalized during the scientific research due to modern attitudes.

The total volume of the dissertation comprises 183 pages.